

ՀՀ Սյունիքի մարզպետարանի գեներալին հարցերով  
մշտական հանձնաժողովի հանձնաժողովի նիստի

## Արձանագրություն N 2

25.05.2015թ Տեղի ունեցավ գեներալին հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի նիստ՝ հանձնաժողովի նախագահ ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ.Դավթյանի ղեկավարությամբ:


### Օրակարգ


1. ՀՀ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման 2016-2020թթ ռազմավարական նոր ծրագրի համար առաջարկությունների ներկայացում:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին 10 անդամներից 8:  
Ներկայացվեցին առաջարկություններ:

### Առաջարկություններ

1. Նոր աշխատատեղերի ստեղծում, աջակցում, խթանում կանանց ձեռնարկատիրական գործունեությանը (հատկապես գյուղական բնակավայրերում): Կանանց գործազրկության մակարդակի իջեցում, զբաղվածության ապահովում, կանանց տնտեսական հնարավորությունների և ներուժի օգտագործում:
2. Դպրոցներում կին- տղամարդ ուսուցիչ հարաբերակցության կրճատում:

Հանձնաժողովի նախագահ՝  Վ.Դավթյան

Հանձնաժողովի քարտուղար՝  Ա.Ոսկանյան